չափաբաժնին հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ) և «Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարան» Բարձրագույն Մասնագիտական Կրթության Պետական Ուսումնական Հաստատություն» ՄՀ-ի և «Գրավիթի» ՍՊԸ-ի միջև 22.11.2024 թվականին կնքված՝ «Պետության կարիքների համար «Ուսմունք» դպրոցի մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ «ՌՀ-ՄՀ-ԲՄԾՁԲ-34/24» պայմանագրով արդեն իսկ հերքվում են Հայցվորի՝ վերոնշյալ փաստարկները:

Հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը՝ Դատարանը գտնում է, որ «Գրավիթի» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարան» Բարձրագույն Մասնագիտական Կրթության Պետական Ուսումնական Հաստատություն» ՄՀ-ի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է մերժման:

6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Սույն գործով, նկատի ունենալով, որ Հայցվորը նախապես վճարել է հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, միաժամանակ արձանագրելով, որ տվյալ դեպքում հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Գրավիթի» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարան» Բարձրագույն Մասնագիտական Կրթության Պետական Ուսումնական Հաստատություն» ՄՀ-ի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE31-2103-4A53-AA6D հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am